

Թիւնը խանդարւում է գլխաւորապէս այն պատճառով, որ ժողովուրդը աղօթքներից և երգերից ոչինչ չի հասկանում* իսկ երբ նկատում ես այդպիսիներին, պատասխանում եմ, որ անհասկանալի աղօթքների ընթերցանութեան ժամանակ ձանձրանում եմ կանգնելուց և որ իրենք եկեղեցի են յաճախում ձայնեղ սարկաւազի և լաւ խմբի երգեցողութիւնը լսելու: Մենք պէտք է հոգ տանենք, որ մեր աստուածապաշտական ժողովները բողոքականներից պակաս գրաւիչ չլինեն: Ուստի լաւ կլինէր հրաւիրել բարեպաշտ ծխականներին և հարցնել, թէ որ լեզուով առաւել լաւ է ժամերգութիւն կատարելը: Այդ պէտք է սկսենք ցածից ժողովրդից, որովհետեւ եթէ բարձրից սկսելու լինենք, եկեղեցու թշնամիները կարող են դէպքից օգուտ քաղել և ժողովրդի մէջ խռովութիւն առաջ բերել...

—Որ ժողովուրդը միշտ փափագել է հասկանալ ժամերգութեան լեզուն ու երգերի բովանդակութիւնը, որ նա ծարաւ է զգացել գիտակցաբար ընդունելու Աւետարանը և իւր կեանքը հաւատոյ պահանջների համապատասխան գարձնելու, դա էլ հին ճշմարտութիւն է, իսկ որ մատչելի լեզուով նրան եկեղեցական գրքեր տալը միշտ ղլացել են, այդ էլ է հին ճշմարտութիւն: Բայց ցանկալի է, որ օր առաջ ուղղուի այդ մեծ պակասը՝ հակառակ դէպքում վաղը ձայնեղ սարկաւազներն ու լաւ երգեցիկ խմբերն էլ չեն կարողանալ եկեղեցի բերել ժողովրդին:

Համառուսական եկեղեցական ժողովի նախապահ- րասական աշխատանքներ.

Անցեալ տարուայ յուլիսին ռուսական Սինօդը առաջարկեց Թեմակալ առաջնորդներին կազմել տեղական ժողովներ և որոշել եկեղեցական բարենորոգութեան խնդիրները: Թեմակալ առաջնորդները շատ տեղ կազմեցին յատուկ նշանակովի մասնաժողովներ այդ նպատակաւ, բայց հէնց հոգեւորականութիւնը երբէք այդ մասնաժողովներին հաւատ չի ընծայում և նրանց չի ընդունում հոգեւորականութեան կարծիքների արտայայտիչ: Ընդհակառակն՝ հոգեւորականութեան տրամադրութեան և կարծեաց արտայայտիչ են համարւում Թեմական պատգամաւորները ժողովներ, որոնք հնարաւորութիւն ունին կարծիք յայտնելու եկեղեցական բարենորոգումների մասին, ինչպէս այդպէս ունեցաւ Իրկուտսկ քաղաքում: Թեմական ժողովն այդ-

տեղ կարծիք յայտնելով, որ առաջնորդները պէտք է ընտրուին թեմի կողմից, բերում է հետևեալ պատմական տեսութիւնը.—

Հին եկեղեցու ամենաականաւոր հովիւները տեղացի մարդիկ էին, որոնք ամբողջ հօտի ձայնով ընտրւում էին այն միջավայրից, որտեղ պէտք է իրենք ապրէին և գործէին, որոնք ծանօթ էին տեղական տրամադրութեան և բարոյական կացութեան: Հին եկեղեցին պաշտօնի էր կանչում ամենալաւերին, չը սահմանափակելով ընտրութիւնները ոչ դասակարգերով, ոչ ընտրուող անձի դրութեամբ, այլ միայն ի նկատի ունենալով ընտրուողի անձնական արժանիքը: Նոյնը չի նկատւում այժմս ռուսական եկեղեցում: Եպիսկոպոսների ընտրութիւնը կատարւում է մի միայն բարձր կրթութիւն ստացած կուսակրօնների սահմանափակ խմբակից: Բայց միթէ կտրականապէս կարելի է ասել, որ միայն այդ է այն լաւագոյն մասը, որ ռուս ժողովուրդը տուել է իւր եկեղեցուն: Ներկայ նշանակովի թեմակալութեան ժամանակ տեղական մարդիկ մի միայն պատահաբար են իրենց թեմում առաջնորդ դառնում: Հակառակ առաքելական 14-դ և առաջին տիեզերական ժողովի 15-դ կանոնի, այժմս եպիսկոպոսները այնքան կարճ ժամանակամիջոցում են թեմից թեմ փոխւում, որ ոչ մի հնարաւորութիւն չունին իրենց թեմի հետ ծանօթանալու: Այդ բանում արգելք են հանդիսանում նոյն իսկ կոնսիստորիաները, որոնք կեանքին հակասող բիւրօկրատիական կերպարանք են ստացել և սաղմի մէջ խեղդում են ծխական հոգևորականութեան ամենաբարի նախաձեռնութիւնները:

— Կարծում ենք, որ նոյն խնդիրները վաղուց հասունացած են նաև մեզ մօտ, որտեղ միայն պատահամբ և այն էլ լուր Ռուսաստանի վեց թեմերում են առաջնորդները նշանակովի: Ցանկալի է վերականգնած տեմնէլ դարերով սրբագործուած եկեղեցական ընտրական օրէնքը բոլոր պաշտօնեաների վերաբերութեամբ՝ առանց այս կամ այն դասակարգով սահմանափակելու ընտրութեան շրջանակը:

Արարատի ընթերցողներն անշուշտ յիշում են Մոսկովայի քահանաների ժողովրդին ուղղած քրիստոնէական կոչը, որ իւր բովանդակութեամբ տարբերւում է ս. Վլադիմիր միտրօպոլիտի կոչից հօկտեմբերի գործադուլի ժամանակ, որը կրակի վրայ բաւական նախ լցրեց և գրգռեց շատերի գաղանական ինստինքտները (բնաղբները) կրօնական հողի վրայ: «Մոսկովսկի

Վեդոմոստի» հռչակաւոր թերթը հանդէս է գալիս որպէս Մոսկւայի քահանաներին մեղադրող և իւր № 289-ում նրանց կոչընդունում է իբրև «բաց յայտարարութիւն, որ նրանք համաձայն չեն միշտ հնազանդուելու որբազան միտրօպոլիտին»։ Թուելով այն բաղմաթիւ հանրածանօթ կանոնները, որոնք քահանային արգելում են եպիսկոպոսից անկախ բան անել, թղթակից պ. Կրասնինիովը խրոխտաբար նկատում է. «Յիշեալ չըտեսնուած երևոյթի վերաբերութեամբ երկու կարծիք լինել չի կարող»։ Նոյն թերթի № 292-ում ոմն Ի. Ի. քահանաներին յանդիմանում է, որ նրանք իրենց թոյլ են տուել «խռովութիւն», որն անտեղի է այդքան մեծ և Աստուծոյ առաջ պատասխանատու «ծառայութեան մէջ», որ նրանք նպաստել են «ոտնակոխ անելու» հեղինակութիւնը և այդ խռովութիւնը հրապարակ են հանել «վատ շուկայում» լրագրութեան մէջ, մինչդեռ որդիական պարտականութիւնը պարտաւորեցնում էր ուրիշ կերպ վարուել։

— «Դուք, որ այդքան քրիստոնէաբար էք տրամադրուած, պարտաւոր էիք անմիջապէս դիմել ձեր հովուապետին, խնդրել նրան, որ նա փարատէր ձեր կասկածներն ու զայրոյթը։ Եթէ նրա քարոզի մէջ կային մի քանի անդգոյշ արտայայտութիւնքներ, այդ դէպքում դուք՝ որպէս սիրող զաւակներ, պարտաւոր էիք պաշտպանել ձեր որբազան հօրը, այն թիւրիմացութիւնները, որոնք կարող էին տեղի ունենալ. պէտք էր նրան նախադուշացնել»։

Церк. Вѣст. այս առթիւ նկատում է. «կանոնների հեղինակութիւնը բարձր է, բայց առաւել բարձր է Աւետարանի հեղինակութիւնը։ Եպիսկոպոսին՝ ինչպէս և ամենայն իշխանութեան հնազանդուիլը պարտադիր է մինչ այն ժամանակ, քանի որ նրանց կարգադրութիւնները չեն հակասում քրիստոնէական ճշմարտութիւններին։ Հին դարերում քահանայք շատ անգամ եկեղեցական կանոնների հակառակ հանդէս են գալիս որպէս իրենց եպիսկոպոսներին մերկացնող—մեղադրող և եկեղեցու դատաստանը միշտ յօգուտ եպիսկոպոսների չէր վերջանում։ Այս դէպքումն էլ Սինօդը գտաւ, որ չը հնազանդուելու հիմունքներ կային։ Իսկ ինչ կը վերաբերի այն բանին, որ նրանց վարմունքն որդիական չէր, այդ բանում քահանայք ամենից քիչ են մեղաւոր, որովհետև մեր եկեղեցական ամբողջ կազմը ոչ թէ հոգևոր, այլ բնութեամբ սկզբունքների վրայ է հիմնուած։ Զինովնիկական—իշխանաւորական յարաբերութեանց հայրականի փոխուիլը զաւակներից չը պէտք է սկսուի, որովհետև հայրերն են զաւակներ ծնում և ոչ թէ ընդհակառակն»։

Ռուսական սրբազան Սինոդը կարևոր գտնելով հոգևոր դպրոցների բարեփոխութիւնը և միանգամայն արդարացի այդ բանի վերաբերութեամբ եղած պահանջները, հրամայել է կատարել նախապատրաստական աշխատանքներ, որի համար գործի են հրաւիրուած բոլոր թեմական իշխանութիւնները, աստուածաբանական գիտութեանց ներկայացուցիչներն և առհասարակ տեղեակ անձինք։ Այդ գործի վերջնական կանոնադրութիւնը կը յանձնուի մօտ ապագայում գումարուելիք համառուսական եկեղեցական խորհրդին։ Իսկ ինչ կը վերաբերի հոգևոր դպրոցների աշակերտներին բարձրագոյն դպրոցներում ընդունելու խնդրին, լուսաւորութեան նախարարութիւնից պատասխան է ստացուած, որ նա տրամադիր է խնդրին դրական ելք տալու։

Վրաց հոգևորականների համաժողովը վճռել է պահանջել վրաց եկեղեցու ինքնուրոյնութիւն (անկախութիւն) և յուն վարի 14-ից դադարեցնել ռուսական Սինոդի հետ որ և է յարաբերութիւն ունենալը։ Այդ խնդրի լուծման համար Պետերբուրգ են կանչուած Կիրիլօն և Լէօնիդ վրաց ազգի եպիսկոպոսները։

Церк. Вѣст.-ում կարդում ենք.

Ց'այսօր իրաւունք և հնարաւորութիւն չ'ունենալով բացարձակ խօսելու եկեղեցական կարիքների մասին և մասամբ այդ պատճառով լուռ մնացած ռուս հոգևորականութիւնը սկսում է բարձրացնել իւր անկեղծ և արդարացի ձայնը գլխաւորապէս թեմական ժողովներում։ Այդ ժողովների վճիռները զարմացնում են իրենց նմանութեամբ և պատգամաւորների հայեացքների նոյնութեամբ բոլոր գլխաւոր և երկրորդական խնդիրներում։ Օրինակի համար առաջ ենք բերում Չերնիգովի թեմական ժողովի կողմից ընդունուած որոշումները. «Առանց յետաձգելու կարևոր են.— 1) Հրաւիրել անմիջապէս ընդհանուր եկեղեցական ժողով, որին պէտք է մասնակցեն իւրաքանչիւր թեմից ընտրած երկու ոչ կուսակից հոգևորական և երկու աշխարհական. 2) կոնսիստորիաները փոխարինել ամբողջ թեմի հոգևորականների կողմից որոշ ժամանակով ընտրուած քահանաների խորհրդով. 3) մօցնել ընտրական սկզբունք եկեղեցական բոլոր պաշտօնների և աստիճանների համար. սրբազնագործ

պաշտօնեաների ընտրութիւնը յանձնուում է գործակալական շրջանները ամբողջ հոգևորականութեան, որին անպատճառ պէտք է մասնակցեն և ծխականները. թեկնածուների ցանկը մատուցւում է քահանայից խորհրդին ի զննութիւն. ընտրեալին հաւատաւորւմ է եպիսկոպոսը: 4) Գործակալական շրջաններում վարչական և դատաւարական իշխանութեան իրաւունքը տալ հոգևորականութեան և ծխականների ներկայացուցիչների կողմից 3 տարով ընտրուած խորհուրդներին: Գործակալական խորհրդի սրուշումների դէմ եղած բողոքները քննուում են եպիսկոպոսի և քահանաների խորհրդի կողմից. 5) վերակադմէլ եկեղեցական դատարանը կանոնական հիմունքների և քաղաքացիական դատարանի սկզբունքների համաձայն և մօցնել պատուի եղբայրական դատարան. 6) ընդունել, որ եկեղեցական կառավարութիւնը ոչ թէ ճնշող կամ իշխող իշխանութեան ընտրութիւնը պէտք է կրի, այլ հովուական. (Մատթէոս գլ Ի. 25—27. Պետրոս Ե. 2—3. Գործք Առաք. Ի. 28—31. և այլն). 7) քահանային ծխից հեռացնել մի միայն քահանայից խորհրդի և եպիսկոպոսի դատաւարանով. 8) թոյլատրել, որ հոգևոր կոչումը թողնեն առանց քաղաքացիական այն իրաւունքներից զրկուելու, որոնք ձեռք են բերուած ծագմամբ և կրթութեամբ. 9) թոյլատրել այլի քահանաների կրկնամուսնութիւնը. 10) թոյլատրել քահանաներին, որ իրաւունք ունենան մասնակցելու ինքնավարական ժողովրդական բոլոր հիմնարկութեանց մէջ և վերացնել անբարոյականացնող շքանշանները»:

Նոյնպիսի հետաքրքրական որոշումներ է ընդունուած նաև հոգևոր դպրոցների և Պետական դումայի վերաբերութեամբ: — Իսկ մենք, դեռ քնած ենք:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Նոյեմբերի 9 ին Փրանսիական Սենատում սկսուեց Լիեզեքին պետութիւնից բաժանելու օրինագծի քննութիւնը, որն անցեալ յուլիս ամսին ընդունուեց պալատի կողմից: Որպէս զի գործը չը ձգձգուի և ներկայ յունվարին խնդիրը վերջնականապէս լուծուի, որոշուեց առանձին սրբազրութիւններ չը մօցնել օրինագծի մէջ, մինչդեռ պահպանողականներն 96 կէտով սրբազրութիւններ են արել և այդ մի միայն ժամանակ վատակելու մընչև նոր ընտրութիւնները: Օրինագծի հակառակորդներն առաջարկում էին պահպանել կոնկորդատը (պապի